«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ *Սաների մեջ գեղագիտական դաստիարակության, նախաձեռնողականության, ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական ՝ այլընտրանքային նկարչության գործընթացում*

Հաստատություն ՝ *<<Երևանի Հ 48 մսուր-մանկապարտեզ>>*

Դաստիարակ ՝ *Վեսմիրա Հայրիյան*

Ղեկավար ՝ *Ժաննա Ավետիսյան*

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ1:ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ……4

1.1 Ի՞նչ է գեղագիտական դաստիարակությունը:……. 4

1.2 Նախադպրոցականի գեղագիտական ընկալումն ու գեղագիտական փորձի յուրօրինակությունը:…… 4

1.3 Գեղագիտական դաստիարակության նպատակը:…… 5

ԳԼՈՒԽ 2 ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՆԿԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ…… 6

2.1Ինչ է այլընտրանքային նկարչությունը:……..6

2.2 Այլընտրաքային նկարչության տեսակները և դրանց դերը երեխայի կյանքում:.....7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նկարչությունը նախադպրոցականի համար նույնքան կարևոր դեր է կատարում ինչպես Խաղերը։ Երեխաները վաղ տարիքից փորձում են արտացոլել իրենց տպավորությունները շրջապատող աշխարհի իրենց պատկերացումների մասին։

Նկարելու ընթացքում երեխաները լիցքավորվում են դրական լիցքերով։

Նկարչությունը նաև օգնում է երեխային ճանաչել շրջակա միջավայրը և սեփական պատկերացմամբ վերատադրել այն։ Անսովոր նյութերն ու օրիգինալ միջոցները երեխաներին գրավում են նրանով,որ այնտեղ չկա <<Չի կարելի >> բառը , կարող եք նկարել այն, ինչ ուզում եք, և նույնիսկ կարող եք հորինել ձեր անսովոր միջոցը։ Եվ վերջապես նկարչությունը հիանալի տարբերակ է երեխայի ստեղծագործական և մտավոր ունակությունները զարգացնելու համար։

Հետազոտական աշխատանքի թեման է <<Սաների մեջ գեղագիտական դաստիարակության, նախաձեռնողականության ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական՝ այլընտրանքային նկարչության գործընացում>>։

Իմ աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ոչ ավանդական նկարչության հնարավոր միջոցները, դրանք իրագործման ձևերն ու պայմանները և փորձարկել դրանք նախադպրոցական երեխաների հետ։

Հետազոռական աշխաբանքը բաղկացած է ներծությունինց , գլուխներից, եզրակացությունից և գործնական աշխատանքի ընթացքն արտացոլող նկարներից։

Աշխատանքում բերված են վերապատրաստվողի կողմից կատարված հեղինակային նկարները կատարված Հ 48 մսուր-մանկապարտեզի իր կրտսեր սաների հետ միասին։

ԳԼՈՒԽ 1. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

1.1 Ինչ է գեղագիտական դաստիարակությունը

Գեղագիտական դաստիարակությունը նպատակաուղղված է շրջակա միջավայրի գեղեցկությունը տեսնելու երեխայի ունակության զարգացմանը, ինչպես նաև ստեղծագործական ունակությունների զարգացմանը։

Գեղագիտական դաստիարակությունը բավականին լայն հասկացություն է ։ Այն ներառում է շրջակա աշխարհի, բնության , կենցաղի, արվեստի, աշխատանքի , հասարակական կյանքի նկատմամբ գեղագիտական վերաբերմունքի զարգացում։

Երեխայի ծանոթությունը շրջապատող աշխարհի գեղեցկությանը ոչ միայն զարգացնում է նրա միտքն ու զգացմունքները, այլև նպաստում պատկերացումների և երևակայության զարգացմանը։ Շրջապատող աշխարհի գեղեցկությունը տեսնելու և հասկանալու ունակությունը նպաստում է մշակույթի դաստիարակմանը, գեղարվեստա-գեղագիտական ճաշակի , աշխատանքային և ստեղծագործական ակտիվության զարգացմանը, նպատակասլացությանը, հաստատակամությանը, հնարավորություն է տալիս անձի ստեղծագործական ինքնահիրացմանը։

1.2 Գեղագիտական դաստիարակության նպատակը

Գեղագիտական դաստիարակության հիմնական նպատակն է մարդու մեջ բարձրացնել գեղագիտական մշակույթը, որը ներառում է հետևյալ բաղադրիչները՝

- Գեղեցիկի ընկալումը բնության մեջ, արվեստում և միջանձնային հարաբերություններում,
- Գեղագիտական ապրումներ ստանալու ցանկությունն ու անհրաժեշտությունը՝ զննում, վերլուծում և գեղեցիկի ստեղծում
- Շրջակա աշխարհի դրսևորումները գնահատելու և վերլուծելու ունակություն՝ գեղագիտական իդեալներին համապատասխանելու տեսանկյունից։
- Անձնային պատկերացումները բնության , մարդու, արվեստի մասին։

Նախադպրոցականների գեղագիտական դաստիարակությունը կոչված է ձևավորելու.

- Երեխաների գեղագիտական գիտակցությունը (տարրական գիտելիքներ արվեստի և գեղեցիկը ճանաչելու, նկատելու և գնահատելու կարողություններ, գեղեցիկի պահանջմունքի և գեղագիտական ճաշակի դաստիարակություն)։
- Ինչպես նաև գեղագիտական-գեղարվեստական ընդունակություններն ու կարողությունները (նկարչություն, ապլիկացի, ծեփակերտում և այլն)։
- Գեղագիտական դաստիարակությունը և արվեստի հետ շփումը։
- Նպաստում են երեխայի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը,
- Ակտիվացնում նրա իմացական գործունեությունը,
- Բացահայտում է նրա ստեղծագործական կարողությունները և խթանում դրանց զարգացումը։

Վերը նշվածները ամփոփվել են երեխաների և նկարներում։ (տես՝ նկ.1)

Նկ.1 Երեխաների գեղագիտական-գեղարվեստական ընկալումները

1.3 Նախադպչոցականի գեղագիտական ընկալումն ու գեղագիտական փորձի յուրօրինակությունը

Նախադպրոցական շրջանում նկատվում են մի շարք առանձնահատկություններ , որոնք արժեքավոր են հետագա գեղագիտական զարգացման համար։

- Գեղեցիկը, բարին, ճիշտը հասկանալու միասնականությունը,
- Բովանդակության և ձևի ամբողջական ընկալումը,

- Մասնակցության և կարեկցանքի ունակությունը,
- Տպավորությունների անմիջականությունը, պայծառությունը երևակայության արտահայտման և դրսևորման մեջ:

ԳԼՈՒԽ 2. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

2.1.Ինչ է այլընտրանքային նկարչությունը

Երեխաները վաղ տարիքից փորձում են արտացոլել իրեն տպավորությունները շրջապատող աշխարհի իրենցպատկերացումների մասին: Մեր նպատակն է օգնել երեխաներին այլընտրանքային նկարչության շնորհիվ ներկայացնել դրանք:

Ոչ ավանդական եղանակներով նկարչությունը մանկական երևակայության նոր շրջանակներ է բացում: Ոչ ավանդական տեխնիկայով նկարելը հետաքրքրաշարժ գործընթաց է , որը որը զարմացնում և հիացնում է երեխային: Պետք է հաշվի առնել, որ երեխայի համար շատ կարևոր դեր է խաղումզարգացնող միջավայրը: Միայն վրձիններով նկարելը կարող է ձանձրալի լինել երեխայի համար:

Դուրս եկեք քայլելու, նայեք թե որքան հետաքրքիր իրեր կան դրսում. ձողիկներ, խցաններ, տերևներ, քարեր, բույսերի սերմեր, բմբուլ և այլն:

Այս բոլոր առարկաները հարստացրել են արդյունավետ գործունեության անկյունները:

Երեխաները զգում են անմոռանալի, դրական զգացմունքներ, իսկ զգացմունքներով կարելի է դատել երեխայի տրամադրության մասին:

Ոչ ավանդական տեխնիկայով նկարելը

- Սովորեցնում է երեխաներին աշխատել տարբեր նյութերի հետ,
- Զարգացնում է կոմպոզիցիայի, ռիթմի, կոլորիտի, գունային ընկալման զգացումը, ձեռքերի նուրբ շարժունակությունը,

Այլընտրանքային նկարչությունը զարգացնումէ նաև երեխայի հուզազգայական ոլորտը .

- Նպաստում է մանկական վախերի վերացմանը, զարգացնում է ինքնավստահությունը,
- Զարգացնում է տարածական մտածողությունը,

- Սովորեցնում է երեխաներին ազատորեն արտահայտել իրենց միտքը,
- Դրդում է երեխաներին ստեղծագործական որոնումների և լուծումների,
- Զարգացնում է ստեղծագործական ընդունակությունները, երևակայությունը, երևակայական թռիչքը:

Աշխատանքի ընթացքում երեխաները գեղագիտական հաճույք են ստանում:

2.2 Այլընտրանքային նկարչության տեսակները և դրանց դերը երեխայի կյանքում

Այլընտրանքային նկարչության տեսակները շատ են՝ մոնոտոպիան, նկարչությունմատներով, կլյաքսոգրաֆիա, նկարչություն դրոշմելով, պուանտիլիզմ, նկարչություն օճառի պղպջակներով, թելոգրաֆիա, գրոտաժ, նկարչություն գդալով, ծեփամածիկով նկարչություն, բամբակե փայտիկներով նկարչություն, աղով նկարչություն և այլն:

Փոքր տարիքային խմբի երեխաների համար կարելի է օգտագործել՝

- Մատներով նկարչությունը
- Թելոգրաֆիան
- Դրոշմներով նկարչությունը

Միջին տարիքային խմբի երեխաների համար՝

- Ծեփամածիկով նկարչությունը
- Բամբակե փայտիկներով նկարչությունը

Ավագ խմբում՝

- Օճառի պղպջակներով նկարչությունը
- Աղով նկարչությունը
- Գրոտաժը

Մոնոտոպիա

Նկարչության դասական տեխնիկաներն անհասանելի են նախադպրոցականի , այդ իսկ պաճառով մեզ օգնության է հասնում մոնոտոպիան, որպես այլընտրանքային նկարչության մեթոդ:

Մոնոտոպիան կարելի է թարգմանել որպես <<մեկ դրոշմ>>: Նկարչության այս մեթոդը շատ հեշտ է տրվում երեխաներին առանց որևէ վերապատրաստման և

զարգացնում է նրանց երևակայությունը: Մոնոտոպիան հիանալի միջոց է նախադպրոցականի անհատականության դրսևորման համար:

Մոնոտոպիան տեխնիկա է , որի ժամանակ հարթ մակերևույթը կամ թուղթը ծածկում են ներկերով, իսկ հետո դրանով թողնում են դրոշմ թղթի վրա:

Աշխատանքի համար մեզ անհրաժեշտ է՝ գուաշ, վրձին, A4 ֆորմատի թուղթ և ջուր:

Նկարեք որևէ իր (ծառ, ծաղիկ, խնձոր և այլն) կամ տեղանք, այնուհետև մաքուր թուղթը դրեք թաց նկարի վրա: Մի փոքր չորանալուց հետո զգուշությամբ հեռացրեք թուղթը:

Նկարչություն մատներով

Մատներով նկարչությունը կամ մատների օգնությամբ գունազարդումը շատ հետաքրքիր և օգտակար սկզբունք է: Նկարչության այս տեսակը հիանալի տարբերակ է երեխայի մանր մոտորիկան զարգացնելու և գունային գամաներ ուսումնասիրելու համար: Բացի այդ մատներով նկարելիս երեխան ստանում է դրական զգացմունքներ, զագանում է տեսողական և շոշափելիքի զգայարանները :

Վառ ստեղծագործական տպավորությունները դրական ազդեցությունն ունեն երեխայի հոգեբանական զարգացման համար:

Նպատակը՝ երեխայի մոտ ձևավորել մատներով շրջան նկարելու կարողությունը, ծանոթացնել ներկերի փափուկ և գունավորող հատկություններին, ձևավորել ներկերով աշխատելու համարձակություն:

Խնդիրները՝

- Արթնացնելու երեխայի հետաքրքրությունը ստեղծվող պատկերների նկատմամբ ,
- Հիշել և հետևել գործողությունների հաջորդականությունը, զարգացնել գեղագիտական պատկերացումները
- Զարգացնել ստեղծագործական ունակությունները, երևակայությունը պատկերացումները
- Զարգացնել ձեռքի մատների մանր մոտորիկան, հղել ձեռքի շարժումները:
- Դաստիարակել ինքնուրույն և պատշաճ աշխատանք կատարելու ունակությունը:

Մատնանկարչության մեթոդիկան փորձակեցինք փոքր տարիքային խմբում:

Երեխաներին չէր տրվել հաստատուն թեմա նկարչության համար որպեսզի նպաստենք երեխաների երևակայության զարգացմանը: Իհարկե կային երեխաներ ովքեր չէի հետևում կանոններին և հրահանգներին, բայց նրանց նկարներն ու նկարի բացատրությունները բավականին հետաքրքիր էին: Ստորև բերված են Հ 48 մսուր-մանկապարտեզում կատարված աշխատանքները (դաստիարակ Վ. Հայրիյանի գլխավորությամբ) (նկ.2):

Նկար 2.

Մատներով նկարչություն Հ 48 մսուր-մանկապարտեզի սաների կատարմամբ

Կլյաքսոգրաֆիա

Նկարե՞լ ձողիկներով, այո ինչու՞ ոչ: Կլյաքսոգրաֆիան զարգացնում է երեխայի երևակայությունը, իսկ փչելը արդեն իսկ լավ է երեխայի թոքերի աշխատանքի համար:

Մեզ ուղղակի պետք է ներկ ու ձողիկ: Ի՞նչ պետք է անի երեխան, փչել, փչել ու էլի փչել, այնքան մինչև ստացվի որևէ պատկեր: Վերջացնելուց հետք ուղղակի շարունակել նկարել մնացած դետալները: Տերև եթե ծառ է ստացվել, աչքեր եթե կախարդական կենդանի է ստացվել (տես՝ նկ.3):

Նկ.3 Զողիկներով նկարչություն

Դրոշմներով նկարչություն

Նկարչությունը օգտակար և անհրաժեշտ է երեխայի համար, սակայն ոչ բոլոր երեխաներն են սիրում նկարել: Դրոշներով նկարելը այս դեպքում կարող է մեծ դեր կատարել , քանզի այս դեպքում երեխան չի վախենում սխալվել: Ամեն քայլափոխի մեզ հանդիպում են նյութեր որոնցով կարելի է դրոշմել, այդ իսկ պատճառով կարող ենք ասել , որ դրոշմները անվերջ են.

1. Դրոշմելու առաջին գործիք կարող է հանդիսանալ երեխայի մատները և ձեքերը: Թղթի վրա կարող ենք նկարել ափով , բռունցքով կամ ափի ծայրով:

Այս եղանակով նկարչությունը պահանջում է ուշադրություն և զարգացնում է երեխայի մանր մոտորիկան:

2. Դրոշմներ բանջարեղեններից և մրգերից: Կարող են վերցնել կարտոֆիլ, կիսել մեջտեղից և կտրել որևէ պատկեր՝ տուն, ծաղիկ, աստղ և այլն:

3. Դրոշմ տերևներով:

Մեզ պետք է տերևի մի կողմը ներկել այնուհետև դնել թղթի վրա, անձեռոցիկի միջոցով հարթեցնել թղթին: Մի փոքր չորանալուց հետո հեռացնել տերևը (տես՝նկ.4):

Նկ.4 Դրոշմներով նկարչություն

Պուանտիլիզմ

Կետերով նկարների ստեղծումը նպաստում է երեխայի մանր մոտորիկայի զարգացմանը, հաստատակամությանը, երևակայության զարգացմանը, մտածողության զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր՝

1. Թուղթ
2. Հասարակ մատիտ
3. Ներկեր
4. Ականջի չոփիկներ

Գործընթացը՝

Թղթի վրա նկարում ենք որևէ պատկեր, այնուհետև ականջի չոփիկը թաթախում ենք ներկի մեջ և կետերի օգնությամբ ներկում ենք նկարը:

Նպատակը՝ ծանոթացնել կետերի օգնությամբ պատկերի ստեղծման մեթոդիկային :

Խնդիրներ՝ զարգացնել երևակայությունը, մանր մոտորիկան և ստեղծագործական պատկերացումները:

Նպատակը՝ ծանոթացնել երեխային այլընտրանքային նկարչության այս տեխնիկայի հետ:

Խնդիրները՝

- Երեխայի մոտ զարգացնել տարբեր առարկաներով նկարելու կարողությունը,
- Զարգացնել ստեղծագործական կարողությունները, երևակայությունը և մանր մոտորիկան (տես նկ.5,6)

Նկ. 5 Կետերով նկարներ

Նկ. 6. Կետերով նկարներ

Թեոլոգրաֆիա

Ներկակաթիլային նկարչության գունավորված թելերով աշխատանքները պահանջում են առանձնահատուկ մոտեցումներ:

Այս տեխնիկայով կարելի է ստանալ մի ինքնատիպ և յուրօրինակ ուրվագծեր, պատկերներ:

Ոչ վանդական մեթոդով նկարելը նախադպրոցականի համար շատ ավելի հաճելի զբաղմունք է ։

Թեոլոգրաֆիան – դա թելի կամ լարի միջոցով նկար ստանալն է ,մեզ պետք է ուղակի թելը սոսնձել թղթի վրա։ Արդյունքում ստացվում է անսովոր փաստացի պատկեր։

Նպատակը՝ սովորեցնել երեխաներին թելերի օգնությամբ ստանալ տպավորիչ, գունեղ, օրիգինալ նկարներ, ձևավորել գծային պատկերներ ստանալու կարողություն, մշակել գույներով աշխատելու հմտություն, պատճառել ուրախություն և հրճվանք։

Խնդիրները՝

- Տեսողական ընկալման բարելավում։
- Մանր մոտորիկայի զարգացում։
- Ստեղծագործական և երևակայական զարգացում։
- Ուշադրության և հաստատակամության բարելավում։

Անհրաժեշտ նյութեր ՝ սոսինձ, թել, թուղթ, ներկ, մկրատ (տես նկ.7)։

Նկ. 7 Թելոգրաֆիա

Հ48 մսուր-մանկապարտեզ 3-5 տարեկանների խումբ

Նկարչություն օճառի պղպջակներով

Պղպջակներ նկարելը այդքան էլ հեշտ չէ անգամ մեծերի համար, բայց երեխաների մոտ էլ կարող է առաջանալ պղպջակ նկարելու ցանկություն։

Պղպջակներով նկարելը զարգացնում է երեխայի երևակայությունը և նպաստում է երեխայի ինքնադրսևորմանը։

Անհրաժեշտ նյութեր

Ջուր, ցանկացած ներկ, հեղուկ օճառ և սպունգ։ Օճառը, ջուրը և ներկը խառնում ենք իրար այնպես, որ ստացվի խիտ փրփուր։ Վերջացնելուց հետո սպունգը փրփրում ենք և դնում թղթի վրա։ Սպասում ենք, որ նկարը չորանա։

Խնդիրները՝

- Կատարելագործել տարբեր նյութերով և առարկաներով նկարելու տեխնիկական կարողություններն ու հմտությունները,
- Ընդլայնել երեխաներին գիտելիքները ոչ ավանդական նկարչական տեխնիկայի մասին ,
- Զարգացնել ստեղծագործական կարողությունները, երևակայությունը, նուրբ շարժիչային հմտությունները։

Անհրաժեշտ նյութեր ՝ թուղթ, ներկեր և գդալ։

Գրոտաժ

Գրոտաժը քերելու օգնությամբ նկար ստանալու եղանակ է։ Դրա համար մեզ ուղղակի պետք է թուղթը պատել սև գուաշով և չորանալուց հետո՝ քերելու օգնությամբ նկարել։

Այս տեխնիկայի անունը գալիս է ֆրանսիական <<Gratter>> բառից , որը թարգմանաբար նշանակում է քերել:

Այս տեխնիկան այլ կերպ հաճախ անվանում են քերում:

Մանկապարտեզում գրոտաժի հրաշալի և անսովոր տեխնիկան հետաքրքիր կլինի ցանկացած տարիքի երեխաների համար: Քերելու միջոցով կոմպոզիցիա ստեղծելը երեխայի համար հրաշք է : Երեխայի աչքերի առաջ աստիճանաբար գեղեցիկի պատկեր է հայտնվում:

Այս տեխնիկայով նկարելը շատ օգուտ է բերում նախադպրոցական տարիքի երեխային:

1. Զարգացնում է մանր մոտորիկան և տեսողական-շարժիչային համակարգը,
2. Ակտիվորեն զարգացնում է երեխայի երևակայությունը,
3. Երեխան իրեն ավելի համարձակ է զգում, ավելի անկաշկանդ, ավելի ազատ է ինքնաարատահայտվում:

Աղով նկարչություն

Աղով նկարչությունը երեխաների ամենասիրելի զբաղմունքներից է: Աղը նկարին կախարդական տեսք է հաղորդում: Սոսինձ, աղ և ներկ՝ ահա թե ինչ է հարկավոր այս տեխնիկայով նկարելու համար: Սկզբում պատկերը, որը պետք է նկարեն պատում ենք սոսնձով, այնուհետև վրան լցնում ենք աղը և թողնում ենք, որ այն չորանա: Չորանալուց հետո թղթից թափ ենք տալիս ավելորդ աղը և վրձինով ներկում ստացված պատկերը: Կարելի է պարզապես աղով ափսեի մեջ ստանալ տարբեր պատկերներ, ինչպես որ արել են Հ 48մսուր-մանկապարտեզի դաստիարակ Վ. Հայրիյանի սաները: (տես նկ 8):

Մանր աղով նկարչության նպատակներից է՝ խթանել հետաքրքրասիրությունը, ծանոթացնել աղի հատկությունների, սովորեցնել աղով հետաքրքիր պատկերներ ստանալու ձևերը, զարգացնել ուշադրությունը, կոկիկ աշխատելու կարողությունը, դաստիարակել համբերատարություն:

Նկ. 8

Գդալով նկարչություն

Խնդիրները՝

Երեխայի մոտ զարգացնել տարբեր առարկաներով նկարելու կարողությունը, զարգացնել ստեղծագործական կարողությունները, երևակայությունը և մանր մոտորիկան։

Նպատակը՝ ծանոթացնել երեխային այլընտրանքային նկարչության այս տեխնիկայի հետ։

Անհրաժեշտ նյութեր՝ գդալ, թուղ, գուաշ։

Ստորև ներկայացված են Հ 48մսուր-մանկապարտեզում կատարված աշխատանքները (դաստիարակ՝ Վ. Հայրիյանի գլխավորությամբ, նկ.9)։

Նկ. 9 գդալով նկարչություն

Հ 48 մսուր-մանկապարտեզ , 3-5 տարեկանների խումբ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այընտրանքային նկարչությունը շատ հետաքրքիր է ցանկացած տարիքային խմբի երեխաների համար։ Տեսակներ կան , որոնք միաժամանակ փորձեցի տարբեր տարիքային խմբերում տարբերությունը հասկանալու համար։ Փոքր տարիքային խմբում լինում էին դեպքեր, երբ երեխաները չէին հետևում հրահանգներին, բայց ամեն դեպքում երեխայի մոտ զարգանում է երևակայությունը, պատկերացումները և մանր մոտորիկան ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ժ. Ավետիսյան «Ոչ ավանդական նկարչության մեթոդիկայի պարզաբանում»

2. Ս.Մարության, Ա.Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն», Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական whnnn2hstr: https://innostud.am/application/library/3de96771.pdf

3. «Դպիր» մանկավարժական ամսագիր:

4. Գրիգորյան, Նախադպրոցական http://councils.ysu.am/pdf/files/065/065-Naira Grigoryan.pdf մանկավարժություն

5. Козлова С. А. Куликова Т. А. Дошкольная педагогика: Учеб. пособие для студ. сред. пед. учеб. заведений, 3-е изд., исправ, и доп. М. Издательский центр «Академия», 2001. 416 с.

(տես հղումը՝

http://www.eduportal44.ru/Kostroma EDU/detsad 43/DocLib7/%D0%BA%D0%BE%D0%B7%D0%BB%D0%BE%D0%B2%D0%B0%20%D0%B4%D0%BE%D1%88%D0%BA%D0%BE%D0%BB%D1%8C%D0%BD%D0%B0%D1%8F%20%D0%BF%D0%B5%D0%B4%D0%B0%D0%B3%D0%BE%D0%B3%D0%B8%D0%BA%D0%B0.pdf)